

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՄԵԾԱՆՈՒՆ ՆԿԱՐԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԱՌԹԻՎ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ հունիսի 11-ին, կիրակի օրը, Մայր տաճարում կատարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ՝ հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի մահվան քառասունքի առթիվ։

Ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը։ Պատարագում է տ. Արսեն վրդ. Բերբերյանը։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը, շրջապատված բարձրաստիճան հոգևորականներով, առաջնորդվում է Մայր տաճար։

Հավարտ ս. պատարագի ընթերցվում է Վեհափառ Հայրապետի ցավակցական կոնդակը՝ գրված Մարտիրոս Սարյանի մահվան տխուր առիթով, որը լույս է տեսել «Էջմիածին» ամսագրի 1972 թվականի Ե համարում (էջ 8)։

Ապա Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր արարողություն։

Երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգչախումբը՝ Խորեն Մելյանեջյանի ղեկավարությամբ և երգչուհի Լուսինե Զաքարյանի մենակատարությամբ։

Ս. պատարագին, ինչպես նաև հոգեհանգստյան արարողությանը ներկա են լինում մեծ նկարչի հարազատները, բարեկամները և նրա արվեստի երկրպագուները։

Հոգեհանգստյան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, որտեղ ջերմ սիրով ընդունում է Մարտիրոս Սարյանի սգավոր ընտանիքի անդամներին ու բարեկամներին և մխիթարության ու սփոփանքի խոսք ասում նրանց։

Թող Աստված հոգվո հանգիստ պարգևի հանգուցյալին, թող անթառամ մնա նրա լույս հիշատակը։



ԿԵՉԱՌԻՍԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

(Գործ՝ ֆրանսահայ ծանոթ նկարիչ Զարեհ Մուրաֆյանի. նվեր Մայր Աթոռին. չափերը՝ 93×73 սմ)